

## ՏՆՐՈՒՆԻ

Ն Շ Ա Ն Պ Ա Լ Ե Ա Ն

(1892 — 1965)

Նմած է Կուտինիս (Քեօքահիս) 1892-ին : Իր նպանական ուսումը առաջ է սեղայաց Ազգային վարժարանին մէշ որմէ յևսոյ յանախած է Քեօքահիոյ Հայկական յախնապակիի արհեստանոցը և շուտով դուրս եկած իրքի վարպետ արհեստաւոր յախնապակիի արուեստին մէշ :

1919-ին Անգլիական հագասար կառավարութիւնը գիմիք՝ իր հանգուցեալ ընկերոջ Մ. Գարագաշեամի հետ, ինչպէս նաև ուրիշ հայ յախնապակիի մասնագետները, կը երաւիրէ նորոգելու հօմէրի Մշկեթի յախնապակիները : 1921-ին կ'ամուսնանայ Օր. Թագուհիի հետ (ծն. Պաղչապամեան) որմէ կումեայ երկու մամչ գաւակներ, Սեդրաք և Ցակոր : 1922-ին իր հանգուցեալ ընկերոջ Մ. Գարագաշեամի հետ կը հիմնեն իրենց սեպհական արհեստանոցը : 1948-ի Արար-Հրեայ ընդհարումներու ընթացքին կը վնասուի մածապէս իրենց արհեստանոցը, սակայն, երկու տարի վերջ, առանց վհատելու կը նորոգեն և կը վերաբանան զայն և կ'սկսին գործի, արտադրելով եկեղեցական և այլ գեղեցիկ գարդանլարներով յօրինաւած յախնապակիի գործեր, որոնցմավ կը գարդարեն եկեղեցիներու և մզկիթներու նակատները : Անգլիական Հոգատար կառավարութեամ և Հայկական կառավարութեամ սա օրերուն եւս և մինչեւ իր մահը, բարձր պաշտօնաւորներ և երեւնի անձնաւորութիւններ գնահատած են յախնապակիի արուեստի իրենց ձեռակերտները և Ս. Երկրի և արտասահմանի մէշ մասնակցած են Համաշխարհային ցուցահանդէսներուն և այդ արևատի արտադրութիւններով :

Իր մահեն վերջ, իր երկու գաւակները, Սեդրաք և Ցակոր պիտի շարունակն իրենց հօր գործը :

Հանգուցեալ եղած է սիրոզ ու գնահատող Ս. Արռողին և ամէն անգամ որ Ս. Արռոյ Սրբազն Պատրիարքները — որոնց հանդէպ տածած է միշտ սէր, յարգանեֆ և նուիրում — պէտքը զգացած են սիրով և խոնի մոօք կատարած է իր հանգուցեալ ընկերոջ Մ. Գարագաշեամի հետ Ս. Ցակորայ Մայր Տաճարի աւագ և Ս. Մակարի գուտները իրենց արուեստի յախնապակեայ գեղեցիկ գործերով գարդարած են ինչպէս նաև քովի գոյգ խորանները, Ս. Գէորգի և Ս. Նիկողայոսի, ներքնամասերը :

Հանգուցեալ նշան Պայեան, բարեսրաւորեան, բարեկամութեամ և հաստատամութեան տիպար մին էր և սիրուած ու յարգուած ազգայիններէն, թիկներէն և օտարներէն հաւասարապէս :

Նորին Ամենապատուութիւնը և Ս. Ցակուլիսանց բովանդակ Միարանութիւնը Ս. Հոգիի միտիքարութիւնը կը հայցեն իր եղրօր Ցակոր Պալեանի և ընտանիքին և համայն ազգականներուն Պէտքութ և այլուր, և իր սիրատն գաւակներուն :

Հանգիստ յափաննեական իր բարի ոգույն :